Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9612

1924

334
Ц-54

Հրատարակություն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղատնտեսական Կոոպերացիայի Միության — «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

334
Կ-54

Լենինականի Տեղ. Տնտ. բաժնի տպարան
1924 թ.

Հրատարակություն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղատնտեսական
Կոոպերացիայի Միության—«ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

334
Զ-54
1008
38546

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Լենինականի Տեղ. Տնտ. բաժնի տպարան
1924 թ.

7999

# ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՒ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՔՆԵՐ:

*Հոդ. 1.* ........................................ *հիմնվում ե* ........................ *գավառի* ........................................ *գավառամասում և գործելու յե* ........................................ *շրջանում:*

*Կոոպերատիվ ընկերության վարչությունը գտնվում ե* ........................................ *գյուղում:*

*Հոդ. 2 Այգեգործների կոոպերատիվ ընկերության նպատակն ե նպաստել իր անդամների տնտեսության արտադրության բարձրացմանը.*

*ա) մատակարարել իր անդամներին այգեգործության համար անհրաժեշտ պարագաներ. բ) կազմակերպել նրանց տնտեսությունից ստացված նյութերի վերամշակման և վաճառման գործը. գ) այգեգործական տնտեսությունը բարձրացնելու և բարելավելու համար վարկավորել նրանց. դ) տարածել օգտավետ գիտելիքներ այգեգործության վերաբերյալ իր գործունեության շրջանում:*

Հոդ. 3. Յերկրորդ հոդվածում հիշված նպատակներին հասնելու համար ընկերությանը իրավունք է վերապահվում. ա) հայթայթել ընկերության և անդամներին անհրաժեշտ գործիքներ, մեքենաներ, դեղորայք, սերմորայք, անասուններ, պարարտանյութեր, կազմակերպել փորձադաշտեր, տնկարաններ, վարձակետեր. բ) ընկերության անդամների աշխատանքի արտադրությունը վերամշակել, պահպանել և վաճառել. գ) կազմակերպել արտադրությունը վերամշակող ձեռնարկություններ և գյուղատնտեսական գործիքների վերանորոգող արհեստանոցներ. դ) անդամներին վարկավորել թե դրամով և թե գործիքներով, տնկիներով և այլն. ե) միջոցներ մշակել իր անդամների տնտեսությունը բարձրացնելու համար. զ) հիմնել գրադարան ընթերցարաններ, կազմակերպել դասախոսություններ և դասընթացքներ, բավարարել իր անդամների կուլտուր-կրթական պահանջներն, ոգտվելով գիտելիքներ տարածելով իր գործունեության շրջանում:

Հոդ. 4. Ընկերությունը իրավունք ունի օրինական բոլոր միջոցներով գույքեր ձեռք բերելու և ոտարելու, պայմանագրեր կնքել, փոխառություններ անել, պարտավորություններ հանձն առնել, նվիրաբերություններ ընդունել, հայցեր հարուցելու հանդես գալ դատարանում իբրև պատասխանատու կողմ և ընդհանրապես ոգտվել իրավական անձի բոլոր իրավունքներով:

Հոդ. 5. Ընկերության պարտքերի հատուցումը ապահովվում է նրան պատկանող բոլոր շարժական և անշարժ գույքերով, դրամագլխով, իր անդամի մուծած փայավճարի ______________ պատիկ չափով:

Հոդ. 6. Ընկերությունն իրավունք ունի միու-



թյուն կազմել այլ կոոպերատիվ կազմակերպություններ հետ և անդամակցել Հայաստանի Գյուղատնտեսական Կոոպերատիվների Միության — «Գյուղմիություն»:

Հոդ. 7. Ընկերությունը ունի իր անվամբ կնիք:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Հոդ. 8. Այգեգործների ընկերության անդամ կարող են լինել յերկու սեռի 18 տ. անձինք, վորոնք զբաղվում են այգեգործությամբ, խորհուրդներ ընտրելու ժամանակ ունեն ձայնի իրավունք և վորոնց իրավունքները չի սահմանափակված դատարանի կողմից, նաև ընկերության գործունեության շրջանում գտնվող իրավասու անձինք. ընկերություններ, արտելներ և այլն:

Հոդ. 9 Ընկերության անդամ չի կարող լինել նման այլ ընկերության անդամ:

Հոդ. 10. Անդամների ընդունելությունը կատարվում է այգեգործների ընկերության ընդհանուր ժողովում, վորը կարող է նախնական ընտրությունը հանձնարարել Վարչությանը, վերապահելով իրան հետագայում հաստատման իրավունքը:

Հոդ. 11 Յուրաքանչյուր անդամը պարտավոր է վճարել վոչ պակաս մեկ փայ: Մտցնել մուտքի վճար, 25 հոդ. համաձայն: Անդամը ոգտվում է մի ձայնի իրավունքով, անկախ այն հանգամանքից թե քանի փայ ունի:

Հոդ. 12. Ամեն մի անդամ ընկերության մեջ ընդունվելիս տալիս է պարտավորագիր, վոր ինքը պարտավորվում է կատարել սույն կանոնադրության բոլոր կետերը ու ընկերության դրած պարտականու-

թյունները 19 հոդ. համաձայն. նույնպես, վոր նա անդամ չէ նման այլ կոոպերատիվ ընկերության։

Հոդ. 13. Ընկերության անդամագրվողը պատասխանատու չէ այն պարտականությունների համար, վորոնք ծագել են իր անդամագրվելուց առաջ։

Հոդ. 14. Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ընկերությունից հեռանալ՝ այդ մասին գրավոր հայտարարություն տալով։ Յեթե հայտարարությունը տալիս է շրջանառության տարին լրանալուց վոչ ուշ քան յերեք ամիս առաջ, նրա հեռացման որը հաշվում է շրջանառության տարվա վերջը, հակառակ դեպքում հեռացման որը հաշվում է գալիք տարվա վերջը։

Հոդ. 15. Ընկերության մեռած անդամի հեռացման որը համարվում է շրջանառության տարվա վերջին որը, մինչև այդ ժամանակ լրանալը մեռած անդամի իրավահաջորդներն ոգտվում են նրա ստացվածքային իրավունքներից ու կատարում են անդամի պարտականությունները, ի բաց առյալ ընդհանուր ժողովին մասնակցելու և ընտրողական վորևե պաշտոն տանելու իրավունքից։

Հոդ. 16. Ընդհանուր ժողովի վորոշման համաձայն ընկերությունից հեռացվում են այն անդամները, վորոնք իրենց պարտականությունները ճշտությամբ չեն կատարում, կանոնադրության և ընկերության օրինական հրահանգներին հակառակ և ընդհանրապես ի վնաս ընկերության են գործում։

Հոդ. 17. Ընդհանուր ժողովի վորոշմամբ ընկերությունից հեռացված անդամը համարվում է հեռացած ընթացիկ տարին լրանալուց հետո, իսկ ընդհանուր ժողովին մասնակցելու կամ ընկերության մեջ վորևե պաշտոն վարելու իրավունքից զրկված համարվում է հեռացման վորոշումը կայանալու որից։



Հոդ. 18. Հեռացված անդամը ընկերության մեջ կարող է նորից ընդունվել 16-րդ հոդ. համաձայն, միայն ընդհանուր ժողովի վորոշմամբ։

Հոդ. 19. Ընկերության յուրաքանչյուր անդամը մյուս անդամների հետ միասին կրում է ընդհանուր լրացուցիչ պատասխանատվություն ընկերության պարտքերի համար, այսինքն այն դեպքում, յերբ ընկերության դրամագլուխն ու ստացվածքը չեն ծածկում պարտքերը, անդամը լրացուցիչ կերպով պատասխանատու է իր բաժնեվճարի ........................ պատիկ չափով։

Հոդ. 20 Հեռացած կամ արտաքսված անդամը ինչպես նաև մեռածի իրավահաջորդները, հեռացման որից հաշված մի տարվա ընթացքում, մինչև իրենց հեռանալը, անդամներին համահավասար պատասխանատու յեն ընկերության մեջ առաջացած բոլոր պարտականությունների համար։

Հոդ. 21. Նախորդ շրջանառության տարվա, վորի ընթացքում հեռացել է անդամը հաշվետվությունն ընդհանուր ժողովի կողմից հաստատելուց յերեք ամիս անց, բաժնեվճարը վերադարձվում է իրեն, կամ նրա իրավահաջորդին, դուրս գալով նրան բաժին ընկնող վնասները, կամ ավելացնելով նրան ոգուտից բաժին ընկնող մասը։

Բացի վերոհիշյալ բաժնեվճարներից՝ հեռացած անդամներն իրավունք չունեն դրամագլխից կամ ուրիշ ստացվածքից վորևե մաս պահանջել։

Հոդ. 22. Այն դեպքում, յերբ ընկերության գործերը դադարեցվում է նախ քան հեռացած անդամի պատասխանատվության ժամկետը լրանալը, նրան կամ նրանց իրավահաջորդներին լիկվիդացիայի ժամանակ

վերապահվում է պատասխանատվության իրավունքը մյուս անդամներին համահավասար։

## 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ։

Հոդ. 23. Ընկերությունը ունի հիմնական, պահեստի և հատուկ դրամագլուխներ։

Հոդ. 24. Հիմնական դրամագլուխը կազմվում է բաժնեվճարներից և զուտ օգտի հատկացումներից։ Հատկացումների չափը սահմանում է ընկերության ընդհանուր ժողովը։

Հոդ. 25. Բաժնեվճարի լրիվ չափը վորոշվում է .................... ռուբ., մուտքի վճարը .................... ռուբլու չափով։ Մուտքի վճարը չի վերադարձվում։

Հոդ 26. Բաժնեվճարը ընկերության անդամագրվելիս վճարում են լրիվին, կամ թե մաս մաս, վորոշ ժամանակամիջոցում, ըստ վորի վճարումների չափն ու ժամանակամիջոցը վորոշում է ընդհանուր ժողովը, կամ վերջինիս լիազորությամբ ընկերության վարչությունը։

Հոդ 27 Ընկերության հիմնական և մյուս դրամագլուխները չեն կարող յենթարկվել հայցի առանձին անդամների պարտքերի ու պարտավորությունների, ինչպես նաև նրանց դեմ ուղղված վարչական անվիճելի պահանջների համար։ Մինչև ընկերությունից հեռանալն առանձին հայցերի առարկա կարող են ծառայել մի միայն զուտ օգուտի այն մասը, վորն իրավունք ունի պահանջելու ինքն, ընկերության անդամը և այդ անդամին հասանելիք վճարումները։

Հոդ. 28. Ընկերության անդամին չի թույլատրվում անուղղակի ձևով տալ իր բաժինը մի ուրիշի։

Հոդ. 29. Հիմնական դրամագլխի մեջ հաշված



գումարները ընկերության գործերի վերջանալուց, վերադարձվում են պարտատիրոջը՝ ընկերության մյուս բոլոր պարտքերը վճարելուց հետո։

Հոդ. 30. Պահեստի դրամագլուխը գոյանում է մուտքի վճարներից, զուտ օգուտից արված հատկացումներից այն չափով, ինչ չափով սահմանելու լինի ընդհանուր ժողովը, բայց վոչ պակաս քան 25 տոկոս, և այն գումարներից, վորոնք գոյանում են ընկերության անդամների վրա դրված տուգանքներից ու գանձումներից, նաև ընդհանուր ժողովի տրամադրության տակ յեկած զանազան միջոցներից։ Պահեստի դրամագլուխը նախասահմանվում է վնասներ ծածկելու համար և ծախսվում է ընդհանուր ժողովի գիտությամբ։

Հոդ. 31. Հատուկ դրամագլուխը գոյանում է զուտ օգուտից արած հատկացումներից այն չափով, վոր սահմանել է ընդհանուր ժողովը։ Ընկերության անդամների պարտքերը ու հոժարակամ վճարումներից և ուրիշ անձերից ու հիմնարկություններից արած փոխառություններից հատուկ դրամագլուխները կազմելու և ծախսելու կանոնները սահմանում է ընդհանուր ժողովը։

## 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ։

Հոդ. 32. Ընկերությունը իր գործառումները կատարում է կանոնադրության 3-րդ հոդվածի համաձայն, ըստ վորի ընկերության անդամների համար առած գումարներն ու վճարումները կատարվում է կամ նրանց հանձնարարությամբ ու հաշվին, կամ թե ի հաշիվ ընկերության։

Հոդ. 33. Ընկերությունը իր անդամների անտեսությունը բարելավելու և բարձրացնելու նպատակով

նրանց կատարած գործառման համար վարկով, ավանսով կամ այլ ձևերով օժանդակություն և ցույց տալիս:

Հոդ. 34. Ընդհանուր ժողովը իրավունք ունի. ա) անդամների վերամշակման և վաճառման մթերքները ընդունելու ձև և իր հերթին կանոններ սահմանել, բ) յուրաքանչյուր անդամի գործառության բարձրագույն չափը վորոշել, գ) մթերքների վորակը և դ) վարկ և ավանս տալու ձևը մշակել:

## 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ:

Հոդ. 35. Ընկերության գործերը վարում է ընկերության անդամների ընդհանուր ժողովը, վարչությունը և, կարիք յեղած դեպքում, խորհուրդը:

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ:

Հոդ. 36. Ընդհանուր ժողովի զբաղմունքի առարկաներն են.

ա) Տարեկան հաշվետվության և առաջիկա տարվա գործունեության նախահաշվի ու ծրագրի, ինչպես և նաև վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացության քննությունը և հաստատումը:

բ) Վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի անդամների թվի վորոշելը և նրանց ընտրելը:

գ) Վարչության նախագահի, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների համար մշակած հրահանգների հաստատումը:

դ) Ընկերության ընտրյալ պաշտոնյաների դեմ դատական գործ սկսելու հարցի լուծումը և իրանց պարտականությունները խախտող անդամների վրա նշանակող տուգանքի չափը վորոշելը:

յե) Վարչության և վերստուգիչ հանձնաժողո-



վի դեմ հարուցված գանգատների քննությունը:

զ) Փոխառությունների, պահեստի դրամագլուխը ծախսելու և օգուտն ու վնասները բաժանելու վերաբերյալ հարցերի լուծումը:

է) Անշարժ սեփականություններ ձեռք բերելու, գրավ դնելու և օտարացնելու հարցերի լուծումը:

ը) Կոոպերատիվ միություններ կազմակերպելու կամ յեղածների մեջ մտնելու հարցերի լուծումը:

թ) Ընկերության գործերի լիկվիդացիայի յենթարկելու և վերջացնելու խնդիրները:

ժ) Ընկերության գործունեության վերաբերող հարցերի մշակման համար հանձնաժողովներ կազմելը:

ժա) Ընկերության հիմնական, պահեստի և հատուկ դրամագլուխների կազմակերպման համար հատկացումներ սահմանելը:

ժբ) Ընկերության գործունեության ընդհանուր վերահսկողությունը, նրանց հետագա զարգացման ու բարելավման ձևերի վորոնումը և քննությունը:

ժգ) Ընկերության անդամների հեռացնելու և հեռացվածներին վերընդունելու հարցի վճռելը:

ժդ) Յեվ առհասարակ այն բոլոր հարցերի քննությունը, վորոնք բարձր են վարչության լիազորությունից:

Հոդ. 37. Ընդհանուր ժողովը բաղկացած է ընկերության բոլոր անդամներից, ըստ վորի ամեն մի անդամը ունի միայն մի ձայնի իրավունք և այդ իրավունքը հանձնել ուրիշին չի թույլատրվում:

Հոդ. 38. Հերթական ժողովը տեղի յե ունենում տարեկան մի անգամ, վոչ ուշ քան շրջանառության տարին վերջանալուց յերեք ամիս հետո: Արտակարգ ժողովները հրավիրվում են ըստ կարիքի վարչության, վերստուգիչ հանձնաժողովի կողմից, կամ արտելի

անդամների մի տասներորդականի պահանջմամբ։

Հոդ. 39. Ընդհանուր ժողովներ հրավիրելու ժամանակի ու նրա քննելիք հարցերի մասին—վարչությունը պետք է մի շաբաթ առաջ տեղեկացնի ընկերության անդամներին։

Հոդ. 40. Ընդհանուր ժողովը օրինական է համարվում յերբ ներկա յեն արտելի բոլոր անդամների առնվազն 1/3-րդ մասը։ Իսկ յերբ ժողովը հրավիրվում է վճռելու ընկերությունը փակելու, անդամների պատասխանատվության չափը փոփոխելու, վնասները անդամների վրա բաշխելու, կանոնադրությունը փոփոխության յենթարկելու և անդամներին ընկերությունից հեռացնելու վերաբերյալ հարցերը՝ այդ դեպքում պահանջվում է առնվազն բոլոր անդամների կես մասի ներկայությունը։

Հոդ. 41. Այն դեպքում յերբ պահանջած թվով անդամները չհավաքվելու պատճառով ժողովը չի կայանում, վոչ ուշ քան մի ամսվա ընթացքում հրավիրվում է յերկրորդ ժողով, վորի վորոշումները օրինական են անկախ ժողովին ներկայացվող անդամների թվից, բացառությամբ, յերբ ընդհանուր ժողովը հրավիրվում է ընկերության գոյությունը վերջ տալու հարցը վճռելու համար։ Յերկրորդ ժողովում կարող են քննվել այն հարցերը միայն, վորոնք գրված են յեղել նախորդ ժողովի օրակարգում։

Հոդ. 42. Ժողովը յուրաքանչյուր անգամ յուր միջից ընտրում է նախագահ ու քարտուղար, ըստ վորում վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները չեն կարող նախագահ ընտրվել։

Հոդ. 43. Բոլոր հարցերը ընդհանուր ժողովում վճռվում են հասարակ մեծամասնությամբ, կանոնադրությունը փոփոխելու, դրամագլուխներ հիմնելու նը-



պատակով, անդամների համար պարտավոր վճարներ սահմանելու, անդամների պատասխանատվությունը փոփոխելու, վնասների բաշխման ու ընկերությունը փակելու վերաբերյալ հարցերը վճռելու համար պահանջվում է 2/3-ական ձայների մեծամասնություն։

Հոդ. 44. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են ընդհանուր ժողովներին արտելի մյուս անդամների հետ համահավասար իրավունքներով, բայց առանց վճռողական ձայնի իրավունք ունենալու, հետևյալ հարցերի քննության ժամանակ. 1) նրանց գործունեությունը գնահատության յենթարկելիս, 2) նրանց համար վարձատրություն նշանակելիս, 3) հաշվետվությունը հաստատելիս և 4) նրանց դատաստանական պատասխանատվության յենթարկելիս։

Հոդ. 45. Ժողովի վորոշումները գրվում են արձանագրության գրքում և ստորագրվում նախագահի ու առնվազն ժողովի ներկա յեղող գրագետ անդամներից յերեքի կողմից։

Ժողովին ներկա յեղող անդամները հիշատակվում են տվյալ ժողովի արձանագրության մեջ։ Նրանց ցուցակը վավերացվում են միևնույն անձանց ստորագրությամբ։ Ժողովի բոլոր վորոշումները պարտադիր են ժողովից բացակայող անդամների համար նույնպես։

Հոդ. 46. Ընդհանուր ժողովում ընկերության ամեն մի անդամը իրավունք ունի այս կամ այն հարցի լուծման առթիվ առանձին կարծիք հայտնելու և պահանջելու, վորպեսզի իր այդ առանձին կարծիքը մտցրված լինի արձանագրության մեջ։

## Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ։

Հոդ. 47. Ընկերության գործերը անմիջական

կառավարողը վարչությունն է, որը բաղկացած է լինում առնվազն 3 անդամից և ընտրվում է ամեն տարի ընդհանուր ժողովում։ Ընտրվում են նաև ոչ պակաս քան յերկու անձնափոխանորդներ՝ մի տարի ժամանակով։

Հոդ. 48. Վարչության գործերը կառավարելու ներքին կարգ ու կանոնները, ինչպես վարչության անդամներից ամեն մեկի լիազորության սահմանները ու պաշտոնավարության յեղանակը, որոշվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված հրահանգով։

Հոդ. 49. Վարչությունը հանդիսանում է ընկերության լիազոր մարմինը և վարում է նրա բոլոր գործերը առանց որևէ հավատարմագրի։ Ընկերության բոլոր գրագրությունները տեղի յեն ունենում վարչության անունից, նախագահի կամ նրա փոխանորդի ստորագրությամբ։

Հոդ. 50. Ընկերության բոլոր գործերը տնօրինում և կատարում է վարչությունը։ Մասնավորապես վարչության պարտականությունն է.

ա) Ընկերության գործարանների և մյուս ձեռնարկությունների ընդհանուր ղեկավարությունը ու նրանցում կատարվող աշխատանքների վերահսկողությունը։

բ) Նոր անդամներ ընդունելը ընդհանուր ժողովի տված լիազորությամբ։

գ) Ընկերության ընդհանուր ժողովի որոշումների իրագործումը։

դ) Ընկերության խաղողի, գինու և մյուս մթերքների վաճառումը։

ե) Ընկերության կարիքների համար անհրաժեշտ պաշարեղենների ու նյութերի հայթայթումը կանխիկ դրամով կամ ապառիկ, նրանց պահպանելը ու ծախսելը։



զ) Ընկերության հասանելիք գումարների ստանալը մասնավոր, հասարակական ու կառավարական անձերից և հաստատություններից։

է) Վարպետների ու այլ ծառայողների վարձելը, ապրանքների ու դանազան առաքումների ստանալը յերկաթուղիներից և հիմնարկություններից։

ը) Ընկերության բոլոր գործերը կառավարական և դատաստանական հիմնարկություններում վարելը ու պաշտպանելը։

թ) Ընկերության անդամներին խաղողի, գինու ու այլ մթերքների արժեքը ու օգուտը հաշվելը ու բաշխելը։

ժ) Հերթական և արտակարգ ժողովների հրավիրելը։

ժա) Ընդունել ամեն տեսակի մուտքերն ու վճարումները, ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվով կատարել ծախքերը, ընկերության գումարները պահելն ու վճարելը։

ժբ) Կազմել ընկերության գործունեության վերաբերյալ հաշվետվությունը և առաջիկա տարվա յելից ու մուտից նախահաշիվները։

ժդ) Պահել ընկերության անդամների ցուցակները, հիշելով նրանց մուծած բաժնեվճարների գումարները և ընկերության պարտքերի դիմաց նրանց բաժին ընկնող պատասխանատվության չափը։

ժե) Տալ մուրհակներ, պարտավորագրեր, նմանապես ընկերության անունից կնքել ամեն տեսակի պայմանագրեր ու գործարքներ։

Հոդ. 51. Վարչության անդամները, որոնք կը խախտեն իրենց պարտականությունները, բոլորը միասին պատասխանատու յեն ընկերության պատճառած վնասների համար։

Սրանից անկախ նրանք այդ օրինակ արարքների ու զանցառությունների համար, յեթե կան առիթներ, յենթարկվում են պատիժների քրեական օրենքների համաձայն այն գործերի համար, վորոնք ընդհանուր ժողովի կողմից հանձնարարված են յեղել բացառապես վարչության անդամներից մեկն ու մեկին։ Վարչության մնացյալ անդամները պատասխանատու չեն, յեթե նրանք հնարավորություն չեն ունեցել ընկերությանը վնաս տալու առաջն առնելու, նմանապես պատասխանատվություններից ազատված է վարչության այն անդամը, վորը համաձայն չի յեղել վարչության վորոշմանը և այդ յուր առանձին կարծիքը տվել է գրավոր կերպով։

Հոդ. 52. Վարչության նիստը համարվում է կայացած, յեթե նրան ներկա յեն յեղել առնվազն 3 անդամ, վորոնց թվում նախագահը կամ նրա փոխանորդը։ Վարչության անդամներից վորևե մեկի հիվանդության դեպքում նրան փոխարինում է անձնափոխանորդը։

Հոդ. 53. Վարչության մեջ հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ։

Հոդ. 54. Վարչության անդամը կարող է հեռացվել յուր պաշտոնից ժամանակամիջոցը լրանալուց առաջ՝ ընդհանուր ժողովի վորոշմամբ։

Հոդ. 55. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ մտնել չեն կարող մինչև յերրորդ աստիճանի ազգակցության կապեր ունեցող ազգականները։

Հոդ. 56. Ընդհանուր ժողովը կարող է նշանակել վարչության անդամներին վարձատրություն մշտական ռոճիկի ձևով։

1008/38546



## 6. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ։

Հոդ. 57. Այգեգործական ընկերության վարչության և ծառայողների գործողությունները քննելու և վերահսկելու նպատակով ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տարի ընկերության անդամների կողմից ընտրում է վերստուգիչ հանձնաժողով, բաղկացած առնվազն 3 անձից և յերկու անձնափոխանորդից, վորոնք վոչ մի պաշտոն չեն վարում ընկերության մեջ, վոչ ընտրությամբ և վոչ էլ վարձով։

Հոդ. 58. Վերստուգիչ հանձնաժողովի պարտականություններն են՝

ա) Յուրաքանչյուր ամիս ստուգել յելից ու մտից գրքերը, հաշվեկշիռը ու դրամարկղը։

բ) Վերահսկել վարչության ու ծառայողների կանոնավոր գործավարության վրա։

գ) Տարեկան ընդհանուր ժողովից առաջ ստուգել տարեհաշիվը՝ իսկական մնացորդների, հաշիվների ու փաստաթղթերի հիման վրա, նմանապես դրամարկղն ու գույքը՝ համաձայն գրանցման ու իրական տվյալների։

դ) Քննել վարչության կողմից առաջիկա տարվա կազմած նախահաշիվը ու գործունեության ծրագիրը։ Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունները կատարած վերստուգությունների և տարեհաշվի ու առաջիկա տարվա գործունեության ծրագրի քննության մասին ներկայացնում են ընդհանուր ժողովին։

Հոդ. 59. Կանոնադրության 48, 49 և 50 հոդվածները կիրառվում են վերստուգիչ հանձնաժողովի անդամների նկատմամբ նույնպես։

Հոդ. 60. Վերստուգիչ հանձնաժողովի դեմ յեղած գանգատները ուղղվում են ընդհանուր ժողովին,

սակայն իրեն հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է ներկայացնել նրանց առաջիկա ընդհանուր ժողովին իր յեզրակացության հետ։

## 7. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ։

Հոդ. 61. Ընկերությունը պարտավոր է պահել գրքեր, վորտեղ պետք է գրվեն. ա) ընկերության բոլոր շրջանառությունների յելքն ու մուտքը և դրամարկղի մեջ յեղած առձեռն դրամը, բ) ընկերության ամեն մի տեսակի շրջանառության յելքն ու մուտքը առանձին-առանձին, գ) ընկերության ունեցած հաշիվների դրությունը ամեն մի անդամի հետ, ինչպես նաև հիմնարկությունների զանազան անձանց հետ, դ) պաշարների ու մթերքների հաշիվը, յե) և ուրիշ գրքեր, ընդհանուր ժողովի վորոշմամբ։

Հոդ. 62. Հաշվետվության տարին համարվում է յուրաքանչյուր տարվա Հոկտեմբերի 1-ից մինչև Սեպտեմբերի 30-ը, բայց յեթե ընկերությունն յուր գործունեությունը սկսել է տարվա ընթացքում, այդ դեպքում հաշվետվության տարին համարվում է նրա գործունեությունն սկսելու որից մինչև Սեպտեմբերի 30-ը։

Հոդ. 63. Շրջանառության տարին, մինչև 3 ամիս լրանալուց վոչ ուշ, վարչությունը կազմում է յուր հաշվետվությունը, հիշատակելով.

ա) Ընկերության բոլոր դրամագլուխները։

բ) Խաղողի, գինու և այլ մթերքների, ինչպես նաև դրամական գումարների ընդհանուր մուտքն ու յելքը։

գ) Ընկերության ունեցած ստացվածքի ու պարտքի հաշիվը։



դ) Ընկերության հաշվեկշիռը։

յե) Ոգուտների ու վնասների և զուտ ոգուտի ո-րինակելի բաշխման հաշիվները։

զ) Առաջիկա տարվա նախահաշիվը։

է) Ընկերության անդամների ցուցակը, հաշվելով ամեն մեկը նրանցից վորքան խաղող ու մթերք է տվել։

ը) Յեվ ուրիշ անհրաժեշտ տեղեկությունները՝ ընկերության գործունեության մասին։

Հոդ. 64. Նախ քան ընդհանուր ժողովին ներկայացնելը, վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ, տարեհաշիվը գրքերով ու փաստաթղթերով ստուգում է վերստուգիչ հանձնաժողովը։ Ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշվետվությունը պահվում է ընկերության գործերում։

## 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈԳՈՒՏՆԵՐԸ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ։

Հոդ. 65. Զուտ ոգուտից կատարվում են հատկացումներ հիմնական ու պահեստի դրամագլուխներին, մնացորդից կարելի յե նշանակել վորոշ գումարներ հատուկ դրամագլուխներ կազմելու համար։ Ոգուտի մի մասը կարելի յե հատկացնել բաժնեվճարներին դիվիդենտ տալու համար, բայց վոչ ավելի քան բաժնեվճարի 12%-ի չափով, վարչության անդամներին ու ծառայողներին հատուկ վարձատրության տալու, նույնպես կուլտուրական ու այլ հանրոգուտ նպատակների համար։

Հոդ. 66. Ընկերության շրջանառությունների մեջ առաջացած վնասները ծածկվում են պահեստի դրամագլխի գումարներով։ Յեթե այդ ձևով վնասները չեն ծածկվում, ընդհանուր ժողովին է թողնվում

ծածկել ի հաշիվ մյուս գրամագլուխների, կամ բաժանել արտելի բոլոր անդամների վրա, ամեն մեկի ունեցած պատասխանատվության համաձայն։

Հոդ. 67. Յուրաքանչյուրն իր մասը վճարելու համար նշանակվում է ժամանակամիջոց ոչ ավելի քան մինչև տարվա վերջը, ըստ որի վճարելու դեպքում նշանակված գումարը գանձվում է դատական կարգով։

## 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՄԸ։

Հոդ։ 68. Ընկերությունը փակվում է. ա) ընդհանուր ժողովի որոշմամբ, բ) ընկերությունը սնանկ հայտարարելու դեպքում և գ) յեթե անդամների թիվը 15 ից պակաս է։

Հոդ. 69. Սույն կանոնադրության հոդված 65-ում նախատեսնված կետերի համաձայն վարչությունը պարտավոր է անհապաղ հրավիրել ընդհանուր ժողով, որը որոշում է ընկերության գործերը լիկվիդացիայի յենթարկել և մշակում է նրա կարգը։

Հոդ. 70. Այդ մասին տեղեկացվում է Հ. Գյուղատնտեսական Կոոպ. Միության և հայտարարվում է տեղական թերթերի մեջ։

Հոդ. 71։ Ընկերության գործերը լիկվիդացիայի է յենթարկվում վարչության անդամների միջոցով, յեթե ընդհանուր ժողովի կողմից այդ պարտականությունը չի տրված ուրիշ անձանց վրա։ Լիկվիդացիա անողների թիվը պետք է լինի առնվազն 3 հոգի։

Հոդ. 72. Լիկվիդացիա անողները յենթարկվում են վարչության անդամների համար սահմանված ընդհանուր կանոններին և այդ հիման վրա պատասխանատու յեն ընկերությանը վնասներ պատճառելու դեպքում։ Նրանք միաժամանակ յենթակա յեն վերստուգիչ հանձնաժողովի վերհսկողությանը։



Հոդ. 73. Լիկվիդացիա անողները կատարում են ընկերության պարտավորությունները, ստանում ու գանձում են ընկերության պահանջները և բաժանում են ընկերության պատկանող ստացվածքը։

Հոդ. 74. Նոր պարտավորություններ հանձն առնել լիկվիդացիա անողները կարող են այն դեպքում միայն, յեթե այդպիսի իրավունք վերապահել է նրան ընդհանուր ժողովը։

Հոդ. 75. Յեթե ընկերության ստացվածքը չբավականա բոլոր պարտքերը ծածկելու համար, այդ դեպքում լիկվիդացիա անողները պակասող վճարելիքը լրացնում են սույն կանոնադրության համաձայն՝ գանձելով ընկերության անդամներից։

Հոդ. 76. Բաժնեվճարները անդամներին վերադարձնելը կատարվում է ընկերության բոլոր պարտքերը վճարելուց հետո միայն է, համենայն դեպս, ոչ շուտ քան լիկվիդացիա անելու մասին տրված հայտարարությունը թերթում տպելու օրից հաշված, մի տարի լրանալուց հետո։

Այն գումարները, որոնք անհրաժեշտ են արտելի վիճելի պարտքերը, բավարարելու համար ինչպես և այն պարտքերը որոնց վճարելու ժամկետը դեռ ևս չի հասել հաշվում ու առանձնացնում են լիկվիդացիա անողները։

Հոդ. 77. Պարտքերը վճարելուց և բաժնեվճարները վերադարձնելուց հետո, ընկերության մնացորդ ստացվածքը ու գրամագլուխները, ընդհանուր լիկվիդացիոն ժողովի ցուցմունքով, գործադրվում են կոոպերատիվ ու հասարակական կարիքների համար։

Հոդ. 78. Լիկվիդացիան վերջանալուց հետո, լիկվիդացիա անողները կազմում են իրենց արածների

հաշիվը, որը ներկայացվում է ընդհանուր ժողովին ի հաստատություն վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացության հետ միասին: Լիկվիդացիան վերջացնելու հաշվետվությունը հաստատելուց հետո այդ հաղորդվում է «Հայկոոպմիություն» կոոպերատիվ կազմակերպությունների գրքում համապատասխան նըկատողություններ անելու համար: Նրան է հանձնվում պահել ընկերության գրքերը, գործերն ու փաստաթղթերը:

## 10. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ:

Հոդ. 79. Ընկերության անդամների ընդհանուր ժողովը համաձայն 37 և 40 հոդ. կարող է փոփոխություն յենթարկել ու լրացնել ներկա կանոնադրությունը:

Հոդ. 80 Ընկերության վարչությունը կանոնադրության մեջ կատարած բոլոր փոփոխությունների մասին պարտավոր է անմիջապես տեղեկացնել և Գյուղատնտեսական Կոոպերացիայի Միության և միայն վերջինիս մացրած փոփոխությունները հաստատելուց հետո, նրանք ստանում են օրինական ուժ:

2013
ՀՀ Ազգային գրադարան
96/2
NL0042623